

Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Հ Ա Ռ Ա Ջ Ք

Ա Ռ Վ Ա Ղ Ա Մ Ե Ռ Ի Կ Ն

Յ. ԱՐՐԱՅԱՄ ԱՊՏԱԼԵԱՆ

ԽՈՏՐՋՐԵՑԻ

ՈՎ է կրտրինս այս վիթխարի,
Որ ընկողմնած մահճին մէջ,
Մահուան ուժին գէժ կը կրտուի
կուրծքին յամէն մի ելեւէջ:
Որ կը կըծկի գալարածու
Քաջամարտիկ ըմբիշ պէս,
Եւ զօրութեամբ հոգւոյն թեթեւ
Ձիւնուած է սոսկ զինուոր անտես:

ՈՎ է կրտրինս այս յաղթական
Որոյ լուսոյ են միտքն ազբիւր,
Եւ ժըմտիւք աչքը կը ցրլան,
Երբ կը պատեն զինքն ընդհանուր,
Աներևոյթ հրոսակներ,
Հիւանդութեան խուճբ մի ճիւղ,
Տեղալով զազոտ դառնն նետեր,
Որոնց մէջ կայ նա միշտ խաղաղ:

Նոր իբր արծիւ մ'է սաստկախոց,
Կըրող փառաց վէրքեր ծածուկ,
Որ զօրութեամբ իւր լայն թևոց
Կ'ուզէ թըռչիլ 'ի բոյնն յատուկ:
Քալասանով ներքին ուժոյն
Լեռներն անցնիլ, բուն բարձրն ելնել -
Ցաղթող շանթից իսկ ամպերուն,
Նոր օգ՝ նոր կեանք անվերջ շքնել:

Թերևս ասպետ մ'է իաչաբարձ,
Հին քրիստոնեայ, հաւատքով լի,
Որ կ'ուզէ մղել իւր ձին անդարձ
Դէպ ի բարձունքը Սիոնի:
Փուշք և սըլաքք, սըլիկներ սուր
Կը թափին վրան. և ինքը զոհ՝
Կ'ուզէ միայն հասնիլ հոն՝ ուր
Կը պըսակուի ամէն սուրբ զոհ:

ՈՎ է ուրեմն այս նաւորք քաջ,
Ալեկոծեալ մարմնովն ամբողջ,
Որ աննրկուն կ'երթայ առաջ,
Միայն մըտքովը քաջառողջ:

Անմուտ Աստղ մ'աչքերն յառած,
Բացող իրեն, ժայռից մէջ խիտ
Արեւանման ճառագայթած,
Մըշտախաղաղ նախանգիտ:

Այն պատանի՞ն է սա արդեօք,
Որ դեռ չըվայ տասնեակ տարի,
Քարոյն սիրով հոգեբորբոք,
Վերջին բարեւ տուաւ ալխարհի -
Եւ հարթելով լեռ՝ ծով անբաւ,
Կըրօնասէր իբրեւ պանդուխտ
Մեր սուրբ կըղզեակն եկաւ մըտաւ,
Տալ զինքն Երկնից, ընել իւր ուխտ:

Աս Սերովբէ եղբայրն է այն,
Խոնարհամիտն և եռանդուն,
Որ խօսելով երկնից հետ միայն
Կարծես կ'ապրէր միշտ զըսարթուն:
Սուրբ Տաճարին մէջ օրնաբան,
Առաւօտուն և գիշերանց,
Ըտ պատշաճի իրեն անուան,
Դիզել ճգնողն անկապուտ գանձ:

Աս՝ Սամուէլ կոչուածն է այն,
Փաղաքաշար իւր մեծերէն,
Որ՝ ինչ լըսէր հրամանի ձայն՝
Կը կատարէր ճիշդ հըլուօրէն,
Հասարակաց ի շինութիւն.
Փոխան փոքրիկ ինչ սըխալման՝
Բիւր խընդրելով ներուճն իսկոյն,
Մեծ յանցանքի մ' իբր ի դարման:

Աս է ուժեղ այն պատանին,
Որ արծանի կը համարուի
Ի վարձ իրեն ազնիւ բարքին,
Անու գրեթէ և տարօք լի,
Դատուիլ ի խումբ Ղևտականաց
Նորոյ Ուխտիս մի զօսն խըմբի -
Եւ նախանձով ուսման վառուած՝
Անոնց նըման շուտ կը փայլի:

Սա՛ է, որ վե՛հ հանդիսից մէջ
 Երանդանայից կ'ըստաստարկէր,
 Եւ բարեպաշտ ոգւովն անէջ
 Ամենուրեք հասնել կ'ուզէր:
 Որ շատ ծաղիկ, շուշան և վարդ,
 Սըրտին ըզմիցն հետ աներկբայ,
 Սըրբավարին կը դնէր ի գարդ,
 Եւ որչափ գո՛հ դէմքն էր վըրկայ:

Ս' անն է ուրեմն, որ շատ որայ
 Իմաստութեան ամբարկով,
 Պարգեւելիք առատ ընծայ,
 Մեծ ասպարէզ կըրտց փութով.
 Եւ պաշտօնեայ եղաւ Էին
 Սուրբ տաճարացն ու խորհրդողոց.
 Լոյս ճըշմարիտ և սունել անգին
 Տալու թըշուառ հոգեւ ճողոց:

Ո՛հ, դու ես դու. ահա կ'ճաննիմք,
 Հաւատոց հորն անուամբ կոչուած
 Դոր դու օծնալը Հայր Աբրահամ.
 Որ, հոգելից բազկատարած,
 Եղար շնորհօքն աստուածային
 Ամանհ Գառնի զոհազործող.
 Դոր կեանք մ'առած, իբր անմարմին,
 Փոխան կեանքիս այս գետնասող:

Բայց ինչո՞ւ այսպէս կը փութաս
 Թողուլ ըզմեզ, թըշուի ի վեր.
 Ո՛հ, չե՛ս գիտեր որ նորահաս
 Քեզ կ'ըստասեն անթիւ հունձքեր:
 Եկեղեցեաց բեմք և խորանք,
 Մանկանց մատողջ մըւթերուն հետ,
 Կ'ուզեն ձայնիդ տալ արձագանգ.
 Կայծ առնուլ սիրտք՝ սըրտի կրակէդ:

Տես, տես քանի՛ գուժ ու գորով ...
 Մեծ ու պըզտիկ քո հոգեկիցք
 Կ'հայցեն անդուլ շերմ աղօթթով
 Առողջանալը սըրտմալիցք:
 Տես, տես ահա բողբոսնուէր
 Դաւա անխոնջ վերանցողիդ
 Անթուն հրօկելը շատ գիշեր
 Ի գորաւիզըն հիւանդիդ: . . .

Բայց նա զգացած է հիասքանչ
 Երկից սիրոյն անուշութիւն,
 Եւ երկրաւոր լոյսն ու ճաննն
 Ալ մութ կու գայ իւր անքերուն:
 « Ձիս կը կանչէ վերին պտագամ,
 Ընկերակիցք իմ սիրային,
 Մընաք բարեաւ, կ'ըսէ, կ'երթամ,
 Բայց ձեզմէ սիրտս է անմեկին:

« Գրտած բարեացո՞ւ էր իմ փափաք
 Փոխադարձել փութովք ջանից.
 Հայէ՛ր կենացս ամբողջ իսկ ճրագ,
 Իդձս էր բլլալ ձեզ գործակից:
 Բայց իմ պակասքս լեցուցէք
 Իտք, ո՞վ ընկերք իմ անձկալիք.
 Չեզմով ըլլան մեր վանորէք՝
 Եւ ես արդեամբ ժիր մեղուաց լիք:


« Կ'երթամ, կ'ըսէ, մընաք բարով
 Աստուածանուէր Հայրք և Եղբարք.
 Շատ է խոռված աշխարհիս ծով,
 Ատեղթդ ըլլան միշտ լուսավառք.
 Եւ անոնց շողն ու շաղ անուշ
 Հեռացընեն վաննեն ձեզմէ
 Ամէն սեւ ամպ ու սըրտի փուշ:
 Միակ բաղանքս այս էր. . . և է »: . . .

Քեզ կ'երանեմ, ո՞վ սիրելի,
 Որ սըրբանման ունեցար մահ,
 Եւ անդընդոց արհաւրօք լի
 Վերջին կամուրջն անցար անահ:
 Դու նահատակ մի նորասօսանչ
 Համբերութեան մեր մէջ եղար,
 Լի վէրքերովդ շարատանջ.
 Եւ, ախ, յանկարծ մեզմէ թըրար:

Թըրաւ, սլացաւ, հասաւ քոյդ կառք
 Դըպատակին՝ յաղթանակաւ:
 Մեծ են անշուշտ արդ վարձքդ և փառք.
 Իսկ մեր, . . . ո՛հ, մեծ է սուգն ու ցաւ:
 Այո՛, մեր սուգն ու սըրտմութիւն
 Մեծ է, իրաւ, ու չի դադիրք
 Քանի յիշելք քո քաղցր անուն,
 Քանի տեսնենք ընկերքդ ընտիր:

Բայց ո՞չ, . . . Կադրին թող լացն ու սուգ.
 Մեզ ըստփոխն՝ վարձըդ պայծառ:
 Այո ստփոխիք. մի նոր նեցուկ
 Դու մեզ երկից մէջ աւելցար:

Հ. Կ. ՆԱԶԱՐԵԱՆԻԱՆ



ԵՒՐՊԱՅԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

« Շիրակ » Վերածնունդը. — Արշակ Զօպանեանի
 « Les troudines arméniens ». — Ամառիտի
 Ոորագրոյ թիւը. — Հայկական Ոոր թերթ մը.
 ՆՈՐ ՀԱՆՐԱՅ

Եզրիպտահայ գրագէտները, վայրկեան
 մը՝ ժամանակի միջոցորտին, — գործա-
 դուներու ազդեցութեանը ենթարկուած,
 վերստին ի լոյս ընծայեցին Շիրակը, Խոր-
 բագիրը, Ա. Արփիար, Եզրկելիէի տե-
 սիլըը կ'ունենայ « Գրանիկ մը շուրջ » որ
 հայ ժողովուրդն է. Գր պատմագրէ թաղա-
 թականութեան աստիճանաւոր փոփոխում-
 ները մինչև այս շրջանը, ուր ազդեցը,
 անշուշտ զագաթնակէտը հասած ըլլալուն
 համար, հակիւ կը թուի. նոյն յոյսերը,
 զայրոյթով խառն, կը նշուլին Տիրան Քէ-